Սենեաբ դաշտի Սիպպարը։ Խալխալ աւանը, որ իշխանական ոստանի դեր է կատարել, ինչպէս նախուրարտական շրջանում, Պահլաւ-Պարթեւների ժամանակ յիշեցնում է Զարգրոսի լեռներում գտնուած Անշանի Խարխարը, Գիլանի Խարխարը, Նուխու եւ Դարալագեազի Խարխարը, որոց հետ համեմատելով աւելի հին է եւ Աչքադարեան չէնքերով նրանցից գերազանց է։ Ճորոխի Խալխարը նախապատմական, ապա կոկուած, տաշուած եւ յղկուած քարերի շինուածքներով, բերդերով, ամրոցներով, պարիսպներով, քրիստոնէական տաճարներով եւ պալատներով ցոյց է տալիս, որ նա իր դիրքը պահպանել է բոլոր յեղաշրջման ընթացքում, գոյութիւնը յարատեւել, ապրել է դարէ դար։

Խալդերի երկրի, Նահարինի աշխարհի նահանգներն ու գաւառները այնպէս են իրար շաղկապուած, որ համայն մեր երկրի անցեալի ուսումնասիրութեան համար անհրաժեշտ է ամէն մի նահանգի առանձնայատուկ վիճակի հետ ծանօթանալ, նորա անցեալն ուսումնասիրել, ներկայ վիճակը մանրամասն քննել եւ ապա բոլորը իրար միացնելով՝ դրուատել եւ դասրովել այն ժողովրդին, որի կեանքը սահել է, անցել է երկրում 70—80 դարերի ընթացքում։ Մեր միջնադարեան պատմաբանները շատ են խօսել, գրել Այրարատեան, Բարձր-